ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ ՏԻՐԱՆԱՅՈՒՄ ՍԾԱԶԲ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԹԻՎ 131 ՈՐՈՇՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱ-ՁԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 7 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունիսի 19-ին Տիրանայում ՍԾԱԶԲ Կառավարիչների խորհրդի կողմից թիվ 131 որոշմամբ ընդունված՝ «Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի փոփոխություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը։

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 14.07.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը։

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Որոշումը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 1994 թվականի հունիսի 30-ի՝ «Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագիրը ՀՀ-ի կողմից վավերացվել է 1995թ. դեկտեմբերի 27-ին՝ ՀՀ ԱԺ Ն-068-I որոշմամբ։

2. Փոփոխությունները կատարվել են 2011թ. հունիսի 19-ին Տիրանայում՝ ՍԾԱԶԲ-ի Կառավարիչների խորհրդի ընդհանուր համաձայնության հիման վրա։ Նշված փոփոխությունների նպատակն է Կառավարիչների խորհուրդն օժտել բացառիկ իրավունքով՝ ընդհանուր համաձայնության հիման վրա փոփոխելու Բանկի հաշվարկային միավորը, վերաբաշխելու դրա կապիտալը, ինչպես նաև նպատակահարմարության դեպքում նշանակել բաժանված բաժնեմասերի թիվը և անվանական արժեքը։

3. Փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է համաձայնել Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության, 23-րդ հոդվածի 2-րդ պարբերության և 24-րդ հոդվածի 3-րդ պարբերության փոփոխություններին։

4. Փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաև դրա ուժի մեջ մտնելու օրվանից, այդ օրը ներառյալ, համաձայնել առ այն, որ.

- Բանկի հաշվի միավոր կսահմանվի եվրոն,
- Բանկի ամբողջ բաժնետիրական կապիտալը կսահմանվի եվրոյով,
- Բանկի կանոնադրական կապիտալը համարժեք կլինի երեք միլիարդի՝ բազմապատկված Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից սահմանված ՓՀԻ /եվրո փոխարժեքով՝ ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ (Փոխարկման տոկոսադրույք)՝ բաժանված երեք միլիոն բաժնետոմսերի՝ ունենալով անվանական

արժեք, որը հավասար կլինի կանոնադրական կապիտալի գումարը բաժանած երեք միլիոնի,

- ՓՀԻ-ով՝ անդամ պետությունների բոլոր չկատարած կապիտալ պարտավորությունները ենթակա կլինեն վճարման և ըստ պահանջի վճարման ենթակա բաժնետոմսերի մասով կփոխարկվեն և կֆիքսվեն եվրոյով՝ Փոխարկման տոկոսադրույքով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2011 թվականի հունիսի 19-ին Տիրանայում ՍԾԱԶԲ Կառավարիչների խորհրդի կողմից թիվ 131 որոշմամբ ընդունված՝ «Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի փոփոխություններում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴՈ-1041